ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակը հաստատելու մասին» թիվ 71-Ն հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 71-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով?

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակը հաստատելու մասին» թիվ 71-Ն հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակում /այսուհետ՝ Աղյուսակ/ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետի «Մինչև 2026» բառերը փոխարինել «Մինչև 2030» բառերով:

2) Աղյուսակի 3-րդ բաժնի 5-րդ կետում «**5000-2120 ՄՀg**» բառերը

փոխարինել «**5000-5255 ՄՀg**» բառերով:

3) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել

«(բացառությամբ՝

8192 ՄՀg

8248 ՄՀg

8304 ՄՀg

8360 ՄՀg)» բառերը:

4) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «221,4 ՄՀg» բառերը:

5) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետի «**147,350**» թվից հետո լրացնել «**ՄՀg**» բառը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: